

«Բարձրագույն կրթության գործընթացի հեռավար կազմակերպման արդյունավետության նահատուներ (ՀՀ նյութերով)»

Խաչատրյան Մ. Գ.

Ասպիրանտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՀՊՏՀ Մակրոէկոնոմիկայի սնփոն (Երևան, Հայաստան)
mararm1991@gmail.com

Վճռորոշ բառեր՝ բարձրագույն կրթություն, հեռավար կրթական մոդել, կրթության արտահանում, կրթական ժամանակակից համակարգեր, օնլայն համալսարան, բնակչության կենսամակարդակ

Evaluation of the efficiency of remote organization of higher education process (with RA materials)

Khachatryan M. G.

Armenian State University of Economics,
postgraduate student of the Chair of Macroeconomics
mararm1991@gmail.com

Annotation. The precondition for the development of higher education as a leading branch of the service sector and increasing the standard of living can be the modernization of the education services, the application of the latest technologies in that sector and the creation and improvement of the education export models.

By examining the experience of many countries in the field of internationalization of higher education and providing of high quality educational services, it can be concluded that these countries have been able to establish their positions in the international market and have thousands of modern, competitive educational programs, various models of implementation of these programs and thousands of students from around the world. Localizing the international experience and taking into account the fact that the Republic of Armenia has a strong potential for the development of higher education, we can confirm that the system of education of the Republic of Armenia has all the preconditions for having a competitive position in the international market.

Key words. Higher education, distance education model, export of education, modern educational systems, online university, living standards of the population

Оценка эффективности дистанционной организации процесса высшего образования (по материалам РА)

Хачатрян М. Г.

Армянский государственный экономический университет,
аспирант кафедры макроэкономики (Ереван, Армения)
mararm1991@gmail.com

Аннотация. Предпосылкой для развития высшего образования как ведущей отрасли сектора услуг и повышения уровня жизни может быть модернизация образовательных услуг, применение новейших технологий в этом секторе, а также создание и улучшение экспортных моделей образования.

Изучая опыт многих стран в области интернационализации высшего образования и предоставления высококачественных образовательных услуг, можно сделать вывод, что эти страны смогли занять свои позиции на международном рынке и имеют тысячи современных, конкурентоспособных образовательных программ, различные модели их реализации и тысячи студентов со всего мира. Локализуя международный опыт и принимая во внимание тот факт, что Республика Армения имеет большой потенциал для развития высшего образования, можно с уверенностью сказать, что система образования Республики Армения имеет все предпосылки для обладания конкурентной позиции на международном рынке.

Ключевые слова. Высшее образование, модель дистанционного образования, экспорт образования, современные образовательные системы, онлайн-университет, уровень жизни населения

Աշխարհում ներկայումս արդիական է դարձել տնտեսությունների այնպիսի ճյուղային զարգացումը, որոնց հիմքում ընկած է կրթությունը և գիտելիքը: Այս երկու գործոնն են մեծապես կարևորվում համաշխարհային տնտեսության

մեջ լայն տարածում գտած գիտելիքահենք տնտեսության առաջխաղացման գործընթացում: Այն երկրները, որտեղ կրթության հատկապես բարձրագույն կրթության ոլորտը գտնվում է պետության ուշադրության կենտրոն-

նում, այնտեղ լայն հնարավարություններ են ստեղծվում գիտելիքը որպես առք ու վաճառքի առարկա դարձնելու և այն ի շահ տնտեսության զարգացման ծառայեցնելու գաղափարները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխարհի գրեթե բոլոր երկրները 2019-2020 թթ կանգնեցին այնպիսի հիմնախնդրի առաջ, ինչպիսին էր COVID-19-ով արտահայտված պանդեմիան, առաջացավ տնտեսությունների որոշ ոլորտների գործունեության ուղղվածության փոփոխության անհրաժեշտություն: Այդ ոլորտների թվում է նաև կրթության ոլորտը, որը, կտրուկ փոփոխության ենթակվեց հատկապես զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ ի տարբերություն զարգացած երկրների դեռևս հստակ կազմավորված չէ հեռավար կրթության մոդելը, և այս տեսանկյունից դեռևս շատ անելիքներ կան:

Կրթության ոլորտի արդիականացումը, նոր մոդելների ներդրումը, կրթության արտահանումը այն կարևորագույն քայլերն են, որոնք կարող են հիմք հանդիսանալ տնտեսության համար որպես հեռանկարային և արդիական ոլորտ: Այս գործընթացը հնարավորություն է տալիս խնայել նյութական ռեսուրսները՝ փոխարենը արդյունավետ օգտագործելով մարդկային ռեսուրսների պոտենցիալը զարգացնել տնտեսությունը և գրանցել առավել բարձր տնտեսական ձեռքբերումներ: Կրթության ոլորտի բոլոր օղակները միաժամանակ կարևոր են այս մոդելով տնտեսությունը զարգացնելու համար, սակայն սույն աշխատանքում կուսումնասիրվի հատկապես բարձրագույն կրթության ոլորտը: Բարձրագույն կրթությունը այն հիմնական օղակն է կրթության ոլորտում, որը առավել պատկերավոր է ցույց տալիս բուհ-պետություն-աշխատանքի շուկա-տնտեսություն կապը: Կարևոր է ուսումնասիրել այս մոդելի կիրառման փորձը և դրա ներդրման հեռանկարները ՀՀ-ում:

Կրթության արտահանումը վերաբերում է այն դեպքերին, երբ կրթական ծրագրերի բովանդակությունը, փորձաքննությունների արդյունքները, տվյալները, մեթոդաբանությունը, ուսումնական պլանները արտադրվում և վաճառվում են արտասահմանյան շուկաներում, երբ կրթական ոլորտի աշխատողները իրենց գումարը ծախսում են համաշխարհային շուկայում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով, ինչպես նաև երբ համալսարանների ադմինիստրատորները բացում են համալսարաններ ամբողջ աշխարհում կամ վաճառում են իրենց ուսումնական ծրագրերը արտերկրում: Կրթական ծառայությունների արտահանումը ներկայումս այնքանով է արդյունավետ, որ եթե իսկապես մշակվեն միջազգային ստանդարտներին համապատասխան որակյալ և մրցունակ կրթական ծրագրեր և

ուսումնական պլաններ կարելի է դրանք արտահանել, քանի որ կրթությունն այժմ ամենավաճառվող ապրանքն է համաշխարհային շուկայում:

Ներկայումս, առավել քան երբևիցե, բնակչությունը կրթությունը դիտարկում է որպես նյութական բարեկեցություն, սոցիալական կարգավիճակ, շարժունություն սպահովող հիմնական միջոց: Հասարակության մեջ ձևավորվել է կայուն մոտեցում կրթությանը՝ որպես կապիտալի ներդրման առավել հեռանկարային և շահութաբեր մի ոլորտի: «Կապիտալիստական զարգացման դինամիկ ուժերը» աշխատության մեջ Արթուր Մեդիսոնը սահմանել է մի օրինակափություն, համաձայն որի կրթության ֆինանսավորման 1% -ով ավելացումը հանգեցնում է ՀՆԱ-ի 0.35% -ի աճի: 2004 թ.-ին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը եկավ այն եզրակացության, որ բնակիչների մեծամասնության համար ուսումնական գործընթացի տևողության միջին անը մեկ տարով հանգեցնում է երկրի ՀՆԱ-ի 3-6% աճին: [1]: Բարձրագույն մասնագիտական կրթության մակարդակը և վիճակը բնութագրող մի շարք ցուցանիշներ կան: Կարելի է առանձնացնել օրինակ՝ բնակչության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների բաժինը, բուհերում ուսանողների ընդհանուր քանակը, ուսանողների քանակը բնակչության մեջ, բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների մեջ կրթության բաղադրիչը, կրթական ծառայությունների արտահանման մակարդակը, կրթական ծառայությունների գինը, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման աստիճանը, բարձրագույն կրթության բաղադրիչի մեծությունը ՀՆԱ մասնաբաժնում և բազմաթիվ այլ ցուցանիշներ:

Այն երկրները, որոնք արտադրում և արտահանում են իրենց կրթական ծրագրերը, արժեքները, մեթոդաբանությունները, ոչ միայն ավելացնում են իրենց եկամուտները, այլև հնարավորություն ունեն ազդել համաշխարհային մակարդակով նոր զարգացող տենդենցների ստեղծման վրա: Բարձրագույն կրթության գերակայությունների շարքում են՝ ժամանակակից դարաշրջանի պահանջները բավարարող պրոֆեսիոնալ կադրերի տրամադրում, կրթության հավասարության երաշխավորում, պրակտիկ ուսուցում, ակադեմիական բանավոր-գրավոր կրթական համակարգի կատարելագործում, լրատվամիջոցների օգտագործմամբ վիրտուալ ուսուցման մոդելների իրախուսում, ֆորմալ, շարունակական և ոչ ֆորմալ կրթության ներդաշնակեցում և այլն: [2]:

Այս տեսանկյունից մեծ դեր ունի հեռավար կրթության արդյունավետ մոդելի մշակումը և ներդրումը, որը միաժամանակ կապահովի

ազգային կրթական համակարգի արդյունավետության բարձրացումը, այլ նաև կարող է բացել մեծ հեռանկարներ հայկական կրթական ծրագրերի և պրոդուկտների որակի բարելավման և արդիականացման, ինչպես նաև դրանց արտահանման ծավալների մեծացմանը, ինչը կզանգեցնի համաշխարհային շուկայում այդ պրոդուկտների նկատմամբ պահանջարկի աճին:

Կարևոր է նշել, որ պանդեմիան մեծ ազդեցություն ունեցավ կրթության՝ հատկապես բարձրագույն կրթության ոլորտի վրա: Անհրաժեշտություն առաջացավ ավանդական կրթության մոդելը փոխարինելու հեռավար կրթության մոդելով և դա իրականացնել հնարավորինս կարճ ժամանակատվածում: Թե ինչպես կազմակերպվեց այս գործընթացը, կախված է տարբեր երկրներում կրթության ոլորտին տրվող առաջնայնության հանգամանաբից: Աշխարհի զարգացած և զարգացող մի շարք երկրներում արդեն իսկ բավականին երկար ժամանակ է գործում են հեռավար կրթության ամենատարբեր մոդելներ [3]:

- հեռավար ուսուցում վիդեոկոնֆերանսի միջոցով: Հեռավար կրթական ծառայություններ մատուցող հաստատությունները ուսանողներին կրթելու համար հաճախ օգտագործում են վիդեոկոնֆերանս: Այս գործընթացի կազմակերպման համար օգտագործվում են վիդեոկոնֆերանսի ծրագիր, ինչպիսին է ezTalks Cloud Meeting բարձր որակի ծրագիրը: Այն ապահովում է անթերի շփումը և հնարավորություն է տալիս փորձառություն ձեռք բերել ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար: Այսպիսով, հեռավար ուսուցման մեջ վիդեոկոնֆերանսը կենսական դեր է խաղում:

- սինխրոն և ասինխրոն հեռավար կրթություն: Բառացիորեն Synchronous-ը նշանակում է «միևնույն ժամանակ», և իսկ `Asynchronous-ը՝ ոչ միաժամանակ: Հեռավար կրթության սինխրոն եղանակը պահանջում է կենդանի հաղորդակցում առցանց կամ հեռակոնֆերանսի միջոցով, կամ էլ առկա՝ լսարանում: Սինխրոն հեռավար կրթությունը սովորաբար պակաս ճկուն է և ավելի շատ ժամանակ է պահանջում ուսանողից հատկացնելու կրթությանը: Այն նաև նպաստում է դասախոսների և ուսանողների միջև ավելի մեծ ծավալի ինտերակտիվ շփումների:

Ասինխրոն հեռավար կրթությունը ուսանողներին տրամադրում է աշխատելու ազատություն և ազատ գրաֆիկի հնարավորություն: Ուսանողները կարող են ավելի շատ ժամանակ անցկացնել այլ ուսանողների հետ:

- բաց ժամանակացույցի առցանց դասընթացներ: Ուսանողներին տրամադրվում է ազատությունը՝ բաց դասընթացների առցանց նպատակահարմար ժամանակ մասնակցելու

հնարավորություն: Սա մտնում է «Ասինխրոն» ուսուցման կատեգորիայի մեջ, որտեղ ուսանողներին տրվում են ինտերնետի վրա հիմնված դասագրքեր և նյութեր: Սկզբնապես ուսանողներին տրամադրվում է իրենց աշխատանքն ավարտելու վերջնաժամկետներ և թույլատրվում է աշխատել իրենց հարմար տեմպերով: Բաց պլանավորված առցանց դասընթացները չափազանց արժեքավոր են այն ուսանողների համար, ովքեր նախընտրում են ինքնուրույն աշխատել:

- հիբրիդային հեռավար կրթություն: Հիբրիդային հեռավար կրթությունը իրականում ասինխրոն և սինխրոն ուսուցման համադրություն է, որի ընթացքում ուսանողները ենթակա են հետևելու իրենց աշխատանքն ավարտելու որոշակի ժամկետի: Ուսանողներին թույլատրվում է ինքնուրույն կատարել առաջադրանքները և այդ առաջադրանքները ներկայացնել առցանց ֆորումի միջոցով:

- համակարգչով իրականացվող հեռավար կրթություն: Համակարգչային հիմունքներով հեռավար ուսուցման ընթացքում ուսանողները պարտավոր են հանդիպել լսարանում կամ համակարգչային լաբորատորիայում ամեն շաբաթ նշված ժամին: Հեռակա կրթության այս տեսակի ուսանողներին բաց գրաֆիկ չի տրամադրվում:

- ֆիքսված ժամանակի առցանց դասընթացներ: «Ֆիքսված ժամանակ» դասընթացը հեռավար կրթության ամենատարածված տեսակն է: Քանի որ վերնագիրը ցույց է տալիս, որ այս դասընթացները առցանց են, բայց ուսանողները պետք է մուտք գործեն իրենց ուսումնական կայք նշանակված ժամին: Այս դասընթացի ձևաչափը մնում է համաժամ, քանի որ այն որոշ դեպքերում պահանջում է պարտադիր կենդանի գրույցներ:

- օնլայն համալսարաններ: Աշխարհին հայտնի են օնլայն համալսարանների բաղմայթիվ օրինակներ, որոնք մատուցում են որակյալ կրթություն մի շարք մասնագիտությունների գծով, ինչպիսիք են American College of Education, University of Florida Distance Learning, Florida State University, University of Missouri, Utah State University, Mississippi State University, Central Michigan University և այլն [4]: Օնլայն համալսարանների գործունեությունը հնարավորություն է տալիս մարդկանց ստանալ որակյալ բարձրագույն կրթություն աշխարհի ցանկացած վայրից:

Այժմ անդրադառնանք օնլայն համալսարանների գործունեության միջազգային փորձին, այդ գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին, դրական և բասացական կողմերին, ինչպես նաև ՀՀ օնլայն համալսարան հիմնելու հեռանկարներին:

Ուսումնասիրելով տարբեր երկրների փորձը կարելի է փաստել, որ աշխարհում արդեն բավականին երկար ժամանակ է գործում են օնլայն համալսարաններ: Դրանցից որոշները գործում են 2 տարբերակով և առկա, և առցանց (**ISM The International School of Management France**) [5], սակայն կան համալսարաններ, որոնք բացառապես գործում են օնլայն հարթակում՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաները և ծրագրային հնարավորությունները [6] **SKILLBOX**:

Արտերկրում հեռավար կրթությունը վաղուց դադարել է լինել ինչ-որ նոր և անսովոր բան: Այժմ հեռակա կարգով հնարավոր է ստանալ գիտական աստիճան գրեթե ցանկացած մասնագիտության մեջ: Ստորև բերված են որոշ մասնագիտությունների հեռավար կրթության առանձնահատկությունները.

1. Ինժինիրինգ: Առցանց ծրագրերի մեծ մասը դասավանդվում է մագիստրոսական և դոկտորական մակարդակներում և ուղղված է այն ուսանողներին, ովքեր արդեն աշխատում են իրենց մասնագիտությամբ, ովքեր ցանկանում են ավելի նեղ մասնագիտացում ստանալ և գիտելիքներ կիրառել նախագծային աշխատանքներում:

2. Համակարգչային գիտություն: Հեռավար կրթության տեխնոլոգիայի բուն գաղափարը անբակտիլորեն կապված է համակարգչային գիտության հետ: Առցանց ուսուցումն այստեղ հիմնականում ապավինում է ուսանողի ինքնուրույն աշխատանքին և իրականացվում է գրեթե առանց սահմանափակումների: Մասնագիտացումները տատանվում են կիրառական գիտությունից մինչև տեսախաղեր:

3. Բիզնեսի կառավարում (MBA): Բիզնես ծրագրերն այսօր ուսանողների շրջանում առավելագույն պահանջարկ ունեն: Բարեբախտաբար, այս ծրագրերը կարող են հեշտությամբ տեղափոխվել հեռահար ձևաչափ, ինչը երիտասարդ ձեռնարկատերերին հնարավորություն է տալիս չկտրվել իրենց բիզնեսից և կրթություն ստանալու գործընթացում լուծել կիրառական բիզնեսի խնդիրներ:

4. Ֆինանսներ և հաշվապահություն: Ֆինանսների և հաշվապահության ոլորտում կրթությունը հասանելի է ամբողջությամբ առցանց: Մասնագիտության մեջ առցանց ուսուցումը ապահովում է բոլոր անհրաժեշտ հմտությունները ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածում աշխատելու համար [7]:

Հեռավար ուսուցման գործընթացում ուսա-

նողների և դասախոսների միջև համատեղ աշխատանքը կազմակերպվում է ինտերնետի միջոցով.

- Ժամանակի մեծ մասը ուսանողը ուսումնասիրում է տրամադրված նյութերը և դասախոսությունները (տեքստ կամ տեսանյութ)՝ օգտագործելով իր անձնական հաշիվը, ինչպես նաև ուսումնասիրում է մասնագիտացված գրականություն.

- Ուսանողը կարող է ուսման ընթացքում ծագող ցանկացած հարց ուղղել պրոֆեսորներին նամակագրության միջոցով՝ փոստով կամ հատուկ ստեղծված հարթակներում (չաթեր).

- Տնային առաջադրանքները նույնպես ուղարկվում են փոստին կամ վերբեռնվում հատուկ համակարգում.

- Խմբային նախագծեր պատրաստելու համար օգտագործվում են տարբեր վիրտուալ տախտակներ, քննարկումներ, ընդհանուր առցանց հասանելիությամբ ծրագրեր;

- Առցանց դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ անցկացվում են Zoom, Google Hangouts, Skype, Microsoft Teams և այլ նմանատիպ վիդեոկոնֆերանսի հնարավորությամբ ծրագրերի միջոցով:

Օնլայն համալսարանների առցանց ուսուցման գործընթացը կազմակերպելու համար գույություն ունեն ինտերնետ ծրագրային ապահովումներ, որոնք իրենցից ներկայացնում են հարթակ, որտեղ համալսարանները կարող են գրանցվել և իրենց նյութերը (էլեկտրոնային գրքեր, տեսաձայնագրություններ, ազատ օնլայն դասախոսություններ, վեբինարներ, էլեկտրոնային հոդվածներ, վիճակագրական տվյալներ և այլն): Այսպիսի հարթակ է լայն տարածում և կիրառություն ունեցող <https://www.coursera.org/> կայքը, որտեղ համալսարաններին հնարավորություն է տրվում գրանցվել և կիրառելով ծրագրի տրված առավելությունները պատշաճ ձևով հիմնել օնլայն համալսարան՝ ընդունելությունից մինչև ավարտական փաստաթղթի հանձնում, ինչպես նաև իրականացնել բաց դասեր, որին կարող են մասնակցել աշխարհի տարբեր կետերում բնակվող մարդիկ՝ դրանով իսկ ձեռք բերելով համաշխարհային վարկանիշ:

Ուսումնասիրելով տարբեր վերլուծություններ, թվային տվյալներ և գիտական հոդվածներ կարելի է հստակ նշել, որ հեռավար կրթության մոդելի ներդրման գործընթացը բավականին բարդ և բազմաբովանդակ է, քանի որ պահանջում է հատուկ պամանների առկայություն (համակարգիչներ, արագ ինտերնետ, աշխատանքային հարթակներ), ծրագրային ապահովում, անհրաժեշտություն է առաջանում մարդկային ռեսուրսների՝ դասախոսների և ուսանողների վերապատրաստման, կրթական

Ժամանակակից և մրցունակ ծրագրերի մշակման, տվյալների բազաների ստեղծման և այլ կարևոր երթահամակարգերի գործարկման: Մակայն պետք է նաև չնոռանալ հեռավար կրթության արդիական համակարգ ունենալու առավելությունների մասին, ինչպիսիք են կրթական նյութերի բազմազանություն, հնարավորություն ստանալ կրթություն ցանկացած վայրից ցանկացած ժամանակ, գիտելիքների ստուգման հնարավորություն, տարբեր թեմաներով ազատ ժամանակ դասախոսություններ լսելու հնարավորություն, անհատական կրթական ծրագրերի մշակման և այդ կրթական ծառայությունների արտահանման հնարավորություն և այլն: [8]:

Քանի որ ներկայումս բազմիցս կարևորվում է կրթության արտահանման ֆենոմենը որպես տնտեսության զարգացման առաջնային և քիչ ռեսուրսատար ոլորտ, ինչպես նաև ամփոփելով

վերոգրյալը կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունը նույնպես ունի բոլոր հնարավորությունները (բարձր որակավորում ունեցող կադրեր բոլոր մասնագիտությունների գծով, բարձրագույն կրթության՝ միջազգային չափանիշների համապատասխան պրոդուկտների առկայություն, որոշ համալսարանների կողմից արդեն իսկ հեռավար կրթության մոդելների կիրառման փորձ, միջազգային կրթական համակարգում մրցունակ դիրք ունենալու անհրաժեշտություն, որոշ ոլորտներում միջազգային շուկայում արդեն իսկ ձեռք բերված լուրջ հաջողություններ և այլն) ունենալու միջազգային չափանիշներին համապատասխան օնլայն համալսարան: Օնլայն համալսարան հիմնելու համար ցանկալի է նախ և առաջ վերլուծել այս համակարգի առանձնահատկությունները SWOT վերլուծական գործիքի միջոցով:

ՀՀ օնլայն համալսարան հիմնելու SWOT վերլուծություն (Կազմվել է հեղինակի կողմից)

<p>1. Բարձրագույն կրթություն ունեցող տարբեր ոլորտների մասնագետների առկայություն</p> <p>2. Հայաստանում կրթության ոլորտի համապատասխանություն միջազգային կրթական չափանիշներին</p> <p>3. ՏՏ ոլորտի արագընթաց զարգացում</p>	<p>1. Հայկական կրթական ծրագրային փաթեթների վերաբերյալ պակաս տեղեկատվություն:</p> <p>Մասնագետների վերապատրաստման անհրաժեշտություն</p> <p>ՏՏ ծրագրային փաթեթների ձեռքբերման և ներդրման ծախսեր</p> <p>Ծառայությունների ոլորտի արտահանման թույլ մակարդակ</p>
<p>1. Բարձրագույն կրթության արտահանման հնարավորություն</p> <p>2. Մրցունակ կրթական փաթեթների մշակման հնարավորություն</p> <p>3. Կրթության արտահանման ֆակտորը՝ որպես տնտեսության զարգացման այլընտրանքային մեթոդի կիրառում և տնտեսական օգուտների ստացում</p> <p>4. Ծառայությունների արտահանման մեջ բարձրագույն կրթության բաղադրիչի մեծացում և ամրապնդում</p> <p>5. Մարդկային ռեսուրսների պոտենցիալը առավել արդյունավետ կիրառելու հնարավորություն</p>	<p>1. Օնլայն համալսարանի ստեղծման գործընթացի կազմակերպման իրավական հիմքերի առկայություն</p> <p>2. Համակարգի ներդրման համար ադապտացիոն շրջանի առկայություն</p> <p>3. Համաշխարհային շուկայում կրթական ծառայությունների մատուցման մրցակցություն</p>

Այս վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ առկա են ոչ միայն լայն հնարավորություններ ստեղծելու և գործարկելու օնլայն համալսարանները նշված հեռավար կրթության մոդելների հիբրիդային կիրառման միջոցով, և աշխարհին մատուցելու որակյալ կրթական ծառայություն, դրանով իսկ նպաստելով ՀՀ արտահանման մեջ ծառայությունների բաղադրիչի ավելացմանը (2020 թ հունվար հոկտեմբեր ամիսներին ՀՀ ծառայությունների կառուցվածքում կրթության բաժինը կազմել է 3.0 %, իսկ 2019 թվականին՝ 2.8% [9]), այլ նաև կան որոշակի խնդիրներ և խոչընդոտներ, որոնք հնարավոր է վերացնել այս ոլորտում ճիշտ քաղաքականության մշակման արդյունքում և կարճ ժամանակատվածում հասնել հաջողության:

Օգտագործված գրականության ցանկ

1. УРОВЕНЬ ОБРАЗОВАНИЯ И ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ 2006 г. «Динамические силы капиталистического развития» Артур Мэддисон
2. **Джуринский А. Н.** Высшее образование в современном мире: тренды и проблемы. 2017 г.
3. <https://www.eztalks.com/elearning/types-of-distance-education.html>
4. <https://www.bestvalueschools.org/online-universities/>
5. <https://www.ism.edu>
6. <https://skillbox.ru>
7. https://www.unipage.net/ru/education_online
8. **Костоева З.М., Лолохоева Л.Р., Костоева М.М.** Дистанционное обучение: плюсы и минусы. // Вестник науки и образования N 19(97). Часть. 1. 2020.
9. <https://www.armstat.am/>

Տվյալները հավաքվել են 19.12.2020

Րեցենզիոնա/Գրախոսվել է 25.12.2020

Մոտեցվել է 08.01.2021